


Հաստատված է 2017թ. հուլիսի 27-ի թիվ 1 նիստում
«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ - Ի
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

 Կ. ԿՈՒՌՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳԱՎԱՌԻ ԱԿ. Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ի
ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Քոլեջի խորհուրդը նրա բարձրագույն կոլեգիալ կառավարման մարմինն է, որը քոլեջի գործունեությունը նպատակամղում է գլխավոր խնդիրների կատարմանը:
2. Խորհրդի աշխատանքների սկզբունքները, նրա կառուցվածքը, ձևավորման կարգը և աշխատակարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

3. Քոլեջի խորհրդի անդամների թիվը 11-ն է:
4. Խորհուրդը ձևավորվում է քոլեջի մանկավարժական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի(այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացուցիչներից:
5. Քոլեջի մանկավարժական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում հաստատության ցանկացած աշխատող, որոնք ընտրվում են քոլեջի մանկավարժական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին: Մանկավարժական կազմից ընտրված խորհրդի անդամների թիվը կազմում են 2-ը:
6. Քոլեջի ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ուսանողական խորհրդի անդամները՝ բարձր առաջադիմություն և հասարական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած ուսանողի: Քոլեջի ուսանողական խորհուրդն ընտրում, և լիազոր մարմին է ներկայացնում առաջադրված սովորողների թեկնածությունները: Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են 3-ը:
7. Հիմնադրի անունից խորհրդի անդամ է առաջադրում ՀՀ Գեղարքունիքի մարզպետը՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանցից: Հիմնադրի կողմից ընտրված խորհրդի անդամ կազմում է 1-ը:
8. Լիազոր մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում պետական պաշտոն զբաղեցնող,

գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ 1, սոցիալական գործընկերներ՝ 3, տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ 1:

9. Առաջադրված անձանց թեկնածուների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը:

10. Խորհուրդն իր կազմից՝ բացի ուսանողության ներկայացուցիչներից, ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն քոլեջում հաստիքային աշխատող, բայց նույն քոլեջում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասավանդելու իրավունքը:

11. Խորհրդի քարտուղարը իրականացնում է նիստերի գործավարությունը:

12. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում, այն համալրվում է ՀՀ օրենսդրությամբ և քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Խորհուրդը՝

- ընտրում է նախագահ՝ խորհրդի հերթական նիստերը վարելու և նիստերի միջև ընկած ժամանակահատվածում խորհրդի նիստերից բխող հանձնարարականների կատարմանը հետևելու համար, խորհրդի նախագահի տեղակալ, քարտուղար,
- հաստատում է իր աշխատակարգը,
- ընտրում է քոլեջի տնօրենին,
- իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները,
- առաջարկություն ներկայացնել լիազոր մարմնին տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ՝ քոլեջի կանոնադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում,
- կարող է ստեղծել մասնագիտական խորհուրդներ, սահմանել դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը,
- հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագիրը,
- լիազորված մարմին է ներկայացնում քոլեջի տարեկան ծախսերի հախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկություններ,
- սահմանում է քոլեջում մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը՝ համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ,
- տնօրենի առաջարկությամբ սահմանում է ներքոլեջային կրթաթոշակներ,
- որոշում է քոլեջի շահույթի տնօրինման ուղղությունները,
- քննարկում է քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը,
- քննարկում և առաջադրում է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները,
- առաջարկություններ է ներկայացնում քոլեջի գործունեության հիմնական ուղղությունների մասին՝ լիազորված մարմնին,
- հաստատում է քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ,
- հաստատում է խորհրդի անդամների վերապատրաստման կարիքների գնահատման և նրանց գործուղմանն ուղղված միջոցառումները,

- լսում և գնահատում է քոլեջի գործունեության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- համաձայնություն է տալիս սեփականության իրավունքով քոլեջին պատկանող գույքի 20-50% կազմող արժեքով գույքը ձեռք բերելու, օտարելու հնարավորությունների հետ կապված խոշոր գործարքների կնքման համար,
- իրականացնում է քոլեջի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Խորհրդի անդամներն իրավասու են՝

ա. մասնակցելու խորհրդի նիստերին վճռական ձայնի իրավունքով,

բ. ընտրելու և ընտրվելու խորհրդի հանձնաժողովի կազմում,

գ. ներկայացնելու առաջարկություններ խորհրդի արտահերթ նիստեր հրավիրելու՝ խորհրդի իրավասության հարցերի և սույն կանոնակարգի փոփոխման վերաբերյալ:

15. Խորհրդի անդամները պարտավոր են՝

ա. մասնակցելու խորհրդի հերթական և արտահերթ նիստերին և, նրա այն մարմինների աշխատանքներին, որոնցում նրանք ընդգրկված են,

բ. կատարել խորհրդի և խորհրդի նախագահության հանձնարարությունները:

16. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

ա. խորհրդի լիազորություններն ավարտվելու դեպքում,

բ. հրաժարման դեպքում,

գ. առաջադրված է եղել քոլեջի ուսանողական խորհրդի կողմից և կորցրել է քոլեջի ուսանողի կարգավիճակը,

դ. առաջադրված է եղել քոլեջի մանկավարժական կազմի խորհրդի կողմից և կորցրել է քոլեջում իր աշխատանքը,

ե. դատապարտվել է ազատազրկման,

զ. դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ,

է. առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին,

ը. մահացել է:

17. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել, լիազորված մարմնի որոշմամբ՝ խորհրդի այդ անդամի թեկնածությունն առաջադրած մարմնի առաջարկությամբ:

5. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

18. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

19. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը համարվում են իրավագոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ը:

20. Արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի առաջարկությամբ կամ խորհրդի անդամների 1/3-ի առաջարկությամբ, ինչպես նաև քոլեջի տնօրենի խնդրանքով:

21. Քոլեջի խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե խորհուրդը, նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով,

քվեարկության կարգի վերաբերյալ այլ որոշում չի կայացրել:

22. Խորհրդի նիստերը, որպես կանոն բաց են:

23. Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավրիրվել քուլեջի աշխատողներ, ուսանողներ և նրանց ծնողներ, հասարակության, կազմակերպությունների ներկայացուցիչներ:

24. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

25. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել, եթե խորհուրդն առանց հարգելի պատճառի երեք անգամ անընդմեջ նիստեր չի գումարում կամ որոշում չի ընդունում:

26. Խորհրդի որոշումները կարող են բողոքարկվել լիազորված մարմնին կամ դատարան:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Սույն կանոնակարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են խորհրդի նիստի որոշմամբ:

28. Խորհրդի գործունեությունը, նրա իրավասությունների ժամկետները կարող է դադարեցվել օրենքով սահմանված կարգով: